«Համընդհանուր ներառում. Պետական ներդրումների արդյունավետություն և հաշվետվողականություն»

ծրագիր

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ԶԵԿՈՒՅՑ

2025թ.

Ակնարկ հետազոտության մասին

Սույն զեկուցը պատրաստվել է «Լուսաստղ» հասարակական կազմակերպության կողմից «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի «Համընդհանուր ներառում. Պետական ներդրումների արդյունավետություն և հաշվետվողականություն» ենթադրամաշնորհի շրջանակներում:
Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ «Իրավաբանների Հայկական Ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական Զարգացման և Հետազոտությունների» կենտրոնի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի համագործակցությամբ:
Զեկույցը նպատակ ունի ՀՀ պետական բյուջեից ներառական կրթությանը տրամադրվող հատկացումների արդյունավետության և կատարողականի գնահատման միջոցով բացահայտել համընդհանուր ներառական կրթության գործընթացի խնդիրները:

«Լուսաստղ» ԲՀԿ
Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 16
Հեռախոս՝ +37455707191
Էլ. Փոստ՝ lusastghhk@gmail.com

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Լուսաստղ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Համընդհանուր ներառում. Պետական ներդրումների արդյունավետություն և հաշվետվողականություն» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Լուսաստղ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումներ _____ 4
2. Նախաբան _____5
3. Մեթոդաբանություն _____ 6
4. Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության ֆինանսական կառավարման քաղաքականություն _____6
5. Երեխայի ներառական կրթությանն աջակցելու եռաստիճան համակարգի քաղաքականություն--6
6. ՏՄԱԿ և ՀՄԿ համակարգի դերակատարությունը ներառական կրթության շրջանակում -- 11
7. Եզրակացություն _____ 14
8. Առաջարկություններ _____ 15
9. Մոնիտորինգի գործիքներ _____ 16

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ _ Հայաստանի Հանրապետություն

ԿԳՄՍ_ Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն

ՀՈՒԱ _ Հաշմանդամություն ունեցող անձ

ԿԶԱՊԿ_ Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ԿԱՊԿՈՒ _ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ՀՄԿ_ Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ՏՄԱԿ_ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ԱՈՒՊ_ Անհատական ուսուցման պլան

ԱՈՒԶՊ-Անհատական ուսուցման և զարգացման պլան

ՆԱԽԱԲԱՆ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է երեխաներին կրթության մատչելիության ապահովմանը՝ հաշվի առնելով նրանց տարբեր հնարավորությունները և կարիքները: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՍ) համակարգում է այդ ծախսերը, ինչը թույլ է տալիս արդյունավետ կազմակերպել ներառական կրթության գործընթացը:

2000-ական թվականներին, երբ Հայաստանը մասը կազմեց համաշխարհային կրթական գործընթացի, կրթության ոլորտում սկսվեցին ֆունդամենտալ փոփոխություններ իրականացվել: Մասնավորապես, 2004-ին ընդունվեց «Կրթության մասին» օրենքը, որում դրվեցին ներառական կրթության սկզբունքները: Այդ ժամանակվանից սկսվեցին փորձեր և նախաձեռնություններ՝ նպաստելու հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկմանը հանրակրթական դպրոցներում: Պետությունը մշտապես փորձում է բարելավել ներառական կրթության որակը, ապահովել համապատասխան նյութական ու տեխնիկական ռեսուրսներ, ինչպես նաև ուսուցիչների պատրաստվածությունը՝ նրանց կրթել, թե ինչպես աշխատել տարբեր կարիքներ ունեցող աշակերտների հետ: Այս կերպ Հայաստանի պետական քաղաքականությունն ուղղված է ոչ միայն համընդհանուր կրթական հնարավորությունների ընդլայնմանը, այլ նաև հասարակության լիարժեք ներառմանը՝ հաշվի առնելով կրթական և սոցիալական խոչընդոտների վերացման կարևորությունը:

2014-2020 թվականներին տեղի ունեցան մի շարք փոխակերպումներ: Այս շրջանում արդեն ձևավորվել էր ներառական կրթության համակարգը: Մանսավորապես, 2014 թ. ՀՀ Ազգային Ժողովն ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), համաձայն որի հանրակրթության համակարգում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության:

Կրթական հաստատություններում ստեղծվեցին համապատասխան պայմաններ՝ երեխայի կարիքներին համահունչ կրթության կազմակերպման համար, ու սկսվեցին ներդրվել հատուկ կրթական մեթոդներ: Գործնականում ավելի շատ դպրոցներ սկսեցին ընդունել երեխաների, ովքեր նախկինում ուսումը ստանում էին միայն հատուկ կրթական հաստատություններում: Սկսած 2020թ-ից մինչև այժմ պետության կողմից իրականացվող ներառական կրթության բարեփոխման քաղաքականության հիմքում տեղեկատվական և ռեսուրսային աջակցությունն է: Այժմ ԿԳՄՍ նախարարությունը շարունակում է զարգացնել ներառական կրթությունը, որի շրջանակներում տեղակայվում են ռեսուրսային դասարաններ, ապահովվում են ուսուցիչների մշտական վերապատրաստում և ստեղծվում են համապատասխան ենթակառուցվածքներ: Ամբողջ երկրում ակտիվորեն իրականացվում են ծրագրեր, որոնք խթանում են ներառական կրթությունը, և այդ ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում կրթական գործընթացի որակի բարձրացմանը: Այս գործընթացի շրջանակներում շատ կարևորվում է նաև կրթության անհատականացված մոտեցումը, որտեղ յուրաքանչյուր երեխա կարող է զարգանալ իր պոտենցիալին համապատասխան՝ առանց խտրականության:

25 և ավելի տարիների ընթացքում ներառական կրթության համակարգը ապրելով զարգացման մի քանի փուլեր առհասարակ չի դիտարկվել զգայուն և ներառական ֆինանսավորման տեսանկյունից, որևէ անգամ չի պարզեցվել ներառական կրթության կայացմանը տրամադրվող պետական բյուջեն: Իրականում, ներառական կրթության ոլորտը շատ կարևորվում է ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական տեսանկյունից: Երբ մենք խոսում ենք ներառական կրթության ֆինանսավորման մասին, ապա պետք է ընդգծել, որ դրա կայացումը և

արդյունավետ զարգացումը հնարավոր են միայն այն ժամանակ, երբ ֆինանսական ռեսուրսները լինեն բավարար և ճիշտ բաշխված:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը հիմնված է որակական մեթոդաբանության գործիքակազմի վրա: Կատարվել է աղբյուրների առաջնային և երկրորդային ուսումնասիրություն: Ի լրումն, տվյալներ են ներառվել պատկան մարմիններին կատարված պաշտոնական հարցումներին ի պատասխան ստացված նամակներից:

Երկրորդային հետազոտության են ենթարկվել 2024թ.-ի ՀՀ Պետական բյուջեի Հանրակրթության հատվածի Համընդհանուր ներառական կրթությանն ուղղված միջոցները: Ուսումնասիրվել են պետբյուջեի հավելվածները՝ Գործառնական, Տնտեսագիտական և Ծրագրային դասակարգմամբ, ինչպես նաև՝ պետական միջոցներից ՊՈԱԿ-ներին և այլ՝ մրցութային կարգով ընտրված կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհները, պետական բյուջեի ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ տարեկան /12 ամսվա/ կտրվածքով:

Որպես առաջնային հետազոտության գործիք կիրառել ենք ֆոկուս խմբային քննարկումները ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների շրջանում և խորացված հարցազրույցները ընտրված դպրոցների տնօրենների հետ: Իրականացվել է 3 ֆոկուս խմբային քննարկում ԿԱՊԿՈ երեխաների ծնողական համայնքի շրջանում և 7 խորացված հարցազրույց ընտրված դպրոցների տնօրենների հետ: Դպրոցներն ընտրվել են Լոռու և Շիրակի մարզերից՝ հիմք ընդունելով ԿԱՊԿՈ երեխաների քանակը տվյալ դպրոցում:

Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության ֆինանսական կառավարման քաղաքականություն

2024 թ-ի՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված բյուջեն կազմում է 3023,2 մլրդ ՀՀ դրամ, որից կրթության ոլորտին տրամադրվել է 317, 2 մլրդ դրամ կամ պետական ծախսերի շուրջ 10 %-ը, որից էլ համընդհանուր ներառական կրթության ապահովման համար հատկացվել է մոտ 3, 8 մլրդ դրամ կամ կրթության ոլորտին տրամադրված գումարի 1.2 %-ը: Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը 2024թ. իրականացվել է 14 բյուջետային ծրագրերի միջոցով: Ինչպես ներկայացված է 2024թ.-ի պետական բյուջեի Ծրագրերի և միջոցառումների դասակարգման հավելվածում[i]՝ Համընդհանուր ներառական կրթության ներդրման համակարգի նպատակն է. յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով: Իսկ վերջնական արդյունքը կլինի հանրակրթական հաստատություններում խոցելի խմբերի երեխաների ընդգրկվածության ապահովումը:

Համընդհանուր ներառական կրթության ներդրմանն ուղղված բյուջեի առյուծի բաժինը՝ մոտ 3, 7 մլրդ ՀՀ դրամ կամ գումարի 97,8%-ը, հատկացված է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ԿԱՊԿՈ) կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների իրականացմանը, իսկ 82 մլն. ՀՀ դրամ՝ տրամադրված գումարի

2,2%-ը, հատկացված է աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրմանը:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԵՐԵԽԱՅԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՌԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական մակարդակ – Հանրակրթական դպրոց

Նախ և առաջ աջակցությունը կազմակերպվում է անմիջապես հանրակրթական դպրոցում, որտեղ սովորում է երեխան: Դպրոցում գործում են ներառական կրթության կազմակերպման ներքին մեխանիզմներ, որոնց նպատակն է աջակցել սովորողի կրթությանը՝ առանց դպրոցական միջավայրից դուրս գալու անհրաժեշտության: Այս մակարդակում՝

Ներգրավվում են ուսուցիչները, ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը (եթե կա), հոգեբանը:

Կազմվում է Անհատական Ուսուցման Պլան (ԱՈՒՊ)՝ երեխայի կարիքներին համապատասխան:

Իրականացվում են խելամիտ հարմարեցումներ՝ ուսումնական միջավայրում:

Աջակցությունը հիմնականում ունի կանխարգելիչ և անմիջական բնույթ:

Այս փուլը կարևոր է, քանի որ նպատակ ունի հնարավորինս ինքնուրույն կերպով կարգավորել երեխայի ուսումնառության ընթացքը՝ դպրոցի ներքին ռեսուրսներով:

2. Երկրորդ մակարդակ – ՏՄԱԿ (Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոն)

Երբ դպրոցը չունի բավարար ռեսուրսներ կամ կարողություններ երեխայի կարիքներին պատշաճ արձագանքելու համար, աջակցության գործընթացը տեղափոխվում է ՏՄԱԿ՝ տարածաշրջանային մակարդակ: ՏՄԱԿ-ները գործում են որպես միջանկյալ օղակ՝ դպրոցների և հանրապետական կենտրոնի միջև:

Այստեղ աշխատում են ոլորտային մասնագետներ՝ հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ,

հոգեբաններ, սոցիալական աշխատողներ։

Իրականացվում է երեխայի կարիքների բազմակողմանի գնահատում։

Աշխատանք է տարվում երեխայի, ծնողների և դպրոցի աշխատակիցների հետ՝ կրթական և հոգեբանական աջակցության ծրագրեր մշակելու և իրականացնելու համար։

Ընդգծվում է միջմասնագիտական համագործակցության կարևորությունը։

ՏՄԱԿ-ը հաճախ կազմակերպում է նաև վերապատրաստումներ դպրոցների անձնակազմի համար՝ ներառական կրթության որակը բարելավելու նպատակով։

3. Երրորդ մակարդակ – ՀՄԿ (Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն)

Եռաստիճան համակարգի վերին մակարդակը հանդիսանում է ՀՄԿ-ը, որն ունի հանրապետական նշանակություն և համակարգում է ողջ գործընթացը։

ՀՄԿ-ը մշակում է քաղաքականություն, մեթոդական ուղեցույցներ և չափորոշիչներ։

Իրականացնում է ՏՄԱԿ-ների մասնագիտական վերահսկում և աջակցություն։

Ուղղորդում է բարդ դեպքերը, որոնք պահանջում են խորացված միջամտություն կամ եզակի մոտեցումներ։

Կատարում է իրավիճակային վերլուծություններ և մասնակցում է ներառական կրթության քաղաքականության բարեփոխմանը։

Այս մակարդակը նաև հանդիսանում է կապող օղակ ԿԳՄՍ նախարարության, առողջապահական համակարգի և այլ գործընկեր կառույցների միջև՝ ապահովելով համակարգային մոտեցում։

Հանրակրթական դպրոցներ.

ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետը պնդում է, որ համընդհանուր ներառական կրթությունը ապահովում է յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը։ Այս օրենքի 35-րդ հոդվածի 3.1 կետը նախատեսում է պետական ֆինանսավորում, որը ապահովում է խելամիտ հարմարեցումներ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար։

ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանը նախատեսում է ֆինանսավորում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների և կրթության առանձնահատուկ պայմանների ստեղծման համար։ Արդյունքում, հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների ծախսերը հաշվարկվում են երեք տարվա կտրվածքով՝ 3300 հազար ՀՀ դրամ (սկսած 2024 թվականից)։

ԿԳՄՍ նախարարի մյուս՝ 2017 թվականի ապրիլի 13-ի N370-Ն հրամանը սահմանում է, որ կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաների ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ, գույք և սարքավորումներ պետք է տրամադրվեն՝ ըստ Սովորողի Անհատական Ուսուցման Պլանի (ԱՈՒՊ)։ Հիմք ընդունելով այս հրամանը

հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տարեկան տրամադրվում է 27 հազար ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ երեխայի համար:

Բացի վերը նշված միջոցառումները, հանրակրթական դպրոցներում ներառված են 2968.5 ուսուցիչների օգնականների հաստիքային միավորներ, որոնց վարձատրման համար 2024թ. Հատկացվել է մոտ 4.153 միլիոն ՀՀ դրամ:

Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով 2024թ. ֆինանսավորումը կատարվել է 10901 սանի համար:

> Պետական բյուջեից տրամադրվող միջոցները համարում եմ ոչ բավարար, քանի որ այնքան չի հատկացվում, որ դպրոցում ունեցել ենք զուգարանի խնդիր, չի լուծվել, տնօրենի առաջարկով երեխային հանել-տարել ենք մեկ այլ դպրոց, որտեղ կա նման զուգարան: Ինձ թվում է, դա հենց ֆինանսի բացակայության պատճառով է:
>
> «Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ծնող»

Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներով կարող ենք ներկայացնել այն հիմնական մարտահրավերները, որոնց բախվում են ծնողները՝ ներառական կրթության համակարգում: Ծնողների արձագանքները հստակ վկայում են ինչպես համակարգային թերությունների, այնպես էլ բարելավման ուղղությամբ ակնկալիքների մասին: Նրանք, անդրադառնալով ֆիզիկական միջավայրի խնդիրներին, նշում են թեքահարթակների, սանհանգույցների բացակայության փաստը, ինչը խոչընդոտում է երեխաների տեղաշարժը: Ծնողներից շատերը նշում են, որ դպրոցները պարզապես չեն ցանկանում հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկել դպրոցներում : Նշում են, որ շատ հաճախ նրանք ուղղորդում են այլ դպրոց, պատճառաբանելով որ այդ դպրոցներում ենթակառուցվածքները հարմարեցված են: Այս պատկերը վկայում է, որ դպրոցներում ներառական կրթությունը չի ապահովվում համապատասխան ենթակառուցվածքներով: Միջավայրը, որը պետք է լինի աջակցող և խթանող, դառնում է խոչընդոտող: Բացի այդ, վերոնշյալ վերաբերմունքը կարող է նպաստել ծնողների թերահավատությանը և երեխաների մեկուսացման ռիսկին:

> Եթե ունի հենաշարժողական խնդիր, բռնվելով է քայլում, դպրոցը պետք է բռնակներ սարքի մինչև ճաշարան, մինչև զուգարան, բայց մեզնից սայլակ են ուզել և առաջարկել են պամպերս հագցնել, իսկ ես պայքարում եմ, որ սայլակ չնստի, պամպերս չօգտագործի, զուգարանակոնք չկա, գոնե մի հատ հարմարեցված լիներ:
>
> «Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ծնող»

Ինչ վերաբերում է կրթական գործընթացի կազմակերպման որակին՝ ծնողների արձագանքները խիստ բևեռված են: Որոշ դպրոցներ փորձում են իսկապես կազմակերպել ներառականություն, իսկ մյուսները ձևականորեն են վերաբերվում: Այս ամենն ազդում է ոչ միայն կրթության որակի, այլև երեխայի ներգրավվածության և զարգացման վրա: Խոսելով ուսուցիչների և դպրոցների վերաբերմունքի մասին պետք է նշենք, որ ըստ վերլուծության,

վերաբերմունքը համակարգային է։ Այն ընդգրկում է ոչ միայն ուսուցիչներին, այլև կրթական կառույցը, ինչպես նաև համայնքային՝ ծնողական մակարդակը։ Սա ներառականության մշակույթի բացակայության արդյունք է։ Վերաբերմունքի փոփոխությունը պետք է լինի կրթության բարեփոխման առանցքային բաղադրիչ։ Ծնողները ցանկանում են, որ երեխաների հետ աշխատեն նպատակային մասնագետներ՝ լոգոպեդ, հոգեբան, հատուկ մանկավարժ։ Նրանք ակնկալում են հստակ ժամանակացույց, երբ երեխան պիտի գնա դպրոց ու վերադառնա որոշակի ժամերի։ Նրանցից շատերը ընդգծում են, որ իրենք ստիպված են դպրոցի բակում սպասել, քանի որ դասապրոցեսի կազմակերպման խնդիր կա։ Նրանք ներառական կրթության նկատմամբ ունեն վստահության պակաս։ Ըստ նրանց, երբ համակարգը չի կարողանում ճիշտ գնահատել ռիսկերը և կատարել չնախատեսված իրավիճակների կանխատեսումներ, ինչպես նաև տրամադրել մասնագիտացված աջակցություն, ծնողն ինքն է սկսում լրացնել այդ բացը՝ դառնալով ուսուցման վերահսկող կամ օժանդակող գործոն։ Այս խնդիրը բերում է նաև ծնողի ծանրաբեռնվածության ավելացման և երեխայի ինքնուրույնության սահմանափակման։

Ինչ վերաբերվում է ծնողների ներգրավվածությանը դպրոցի բյուջեի, կրթական գործընթացների և անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) կազմման գործընթացում, ծնողների մեծ մասը նշում է, որ իրենք անտեղյակ են այդ գործընթացներից։ Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել կամ հաղորդակցության բացակայությամբ, կամ ծնողների կողմից ժամանակի կամ հետաքրքրության պակասով։ Անհատական ուսուցման պլանները, որոնք հատուկ կարիքներով երեխաների համար կարևոր գործիք են, հաճախ կազմվում են առանց ծնողների մասնակցության, ինչը նվազեցնում է դրանց արդյունավետությունը, ընդգծում են ծնողները։ Նրանք մատնանշում են, որ կարող են չգիտակցել իրենց դերը կամ իրավունքները դպրոցական գործընթացներում, ներառյալ ԱՈՒՊ-ի մշակման մեջ։ Ծնողները հաճախ մեծ ակնկալիքներ ունեն դպրոցներից՝ վստահ լինելով, որ երեխաների կրթության և զարգացման մեջ ուսուցիչներն առանցքային դեր ունեն։ Սակայն իրականությունն այն է, որ շատ դեպքերում երեխաներն ակտիվ մասնակցում են միայն մայրենիի և մաթեմատիկայի դասերին, մինչդեռ մնացած առարկաների ժամանակ հաճախ զանգում են ծնողներին՝ խնդրելով վերցնել երեխաներին, քանի որ նրանք, իբր, խանգարում են դասապրոցեսին։ Ֆիզկուլտուրայի ուսուցիչները երբեմն թերահավատությամբ են մոտենում ներառական կրթությանը՝ մտավախություն ունենալով, որ հաշմանդամություն ունեցող երեխան կարող է վնասվել կամ վնասել մյուսներին։ Այս մոտեցումը ոչ միայն սահմանափակում է երեխաների հնարավորությունները, այլև հակասում է ներառական կրթության սկզբունքներին։

Դպրոցների տնօրենների հետ իրականացված խորացված հարցազրույցների արդյունքներում ևս արտահայտվում են վերոնշյալ խնդիրները։ Տնօրենների գերակշիռ մասն ընդգծել է կրթության որակի և մատչելիության առաջնահերթությունը՝ կարևորելով պետական չափորոշիչների լիարժեք կատարումը որպես ռազմավարական ուղղություն։

Նրանց խոսքով՝ ուսուցչի օգնականների հաստիքները ձևավորվել են՝ ելնելով ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաների թվաքանակից՝ յուրաքանչյուր հինգ երեխայի համար նախատեսելով մեկ օգնական։ Տնօրենները քաջատեղյակ են ԿԳՄՍ նախարարության 2017 թ. ապրիլի 13-ի N370-Ն հրամանի դրույթներին, որոնք ծառայում են որպես գործունեության ուղեցույց։

Այնուամենայնիվ, տնօրենների մեծ մասը միակարծիք է, որ առկա մասնագետների քանակը չի

համապատասխանում երեխաների իրական կարիքներին: Առաջարկվում է դպրոցներում ստեղծել ռեսուրսային սենյակներ, որտեղ մասնագիտական աջակցությունը կտրամադրվի անմիջապես դպրոցում: Այս մոտեցումը միաժամանակ կնվազեցնի ծնողների ծանրաբեռնվածությունը և կնպաստի երեխաների սոցիալական ներառմանը: Սակայն, որոշ ծնողներ սխալ են ընկալում այս նախաձեռնությունը՝ դա դիտարկելով որպես երեխաների մեկուսացման կամ առանձացման փորձ:

Տնօրենները անդրադարձել են նաև ԿԱՊԿՈՒ երեխաների համար պետբյուջեից տրամադրվող նյութատեխնիկական աջակցության միջոցների ձեռք բերման գործընթացին: Ըստ սահմանված կարգի՝ գնումները կատարվում են 27,000 ՀՀ դրամի սահմանաչափով: Սակայն, ինչպես նշել է հարցված տնօրեններից մեկը, հաճախ անհրաժեշտ պարագաները դժվարությամբ են գտնվում վաճառքում, ինչը ոչ միայն երկարացնում է գնումների գործընթացը, այլ նաև հավելյալ աշխատանք է պահանջում: Նրա առաջարկով ավելի նպատակահարմար կլինի, եթե պետությունը կենտրոնացված կարգով կատարի անհրաժեշտ գնումները և տրամադրի դպրոցներին՝ նվազեցնելով վարչարարական բեռը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցները բավականաչափ տեղեկացված և գործնականորեն ներգրավված են ներառական կրթության կազմակերպման գործընթացում: Սակայն առկա են նաև համակարգային խոչընդոտներ՝ մասնավորապես կապված շենքային պայմանների, մասնագետների բավարար պաշարի և նյութատեխնիկական գործընթացների բարդության հետ: Ըստ նրանց թիրախային ֆինանսավորումը, ծնողամետ մեխանիզմները, կենտրոնացված գնումները և մանկավարժահոգեբանական մասնագիտական թիմերի ամրապնդումը կարող են էական առաջընթաց ապահովել համընդհանուր ներառականության ապահովման ուղղությամբ:

ՏՄԱԿ և ՀՄԿ համակարգի դերակատարությունը ներառական կրթության շրջանակում

Համընդհանուր ներառական կրթության գործընթացին ուղղված բյուջեի մեծ մասը՝ մոտ 3, 7 մլրդ դրամ՝ կամ 97,8%-ը, հատկացված է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների իրականացմանը: ՀՀ-ում մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող կազմակերպությունները 21-ն են:
Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին գումարները տրամադրվում են պետական ոչ մրցութային դրամաշնորհների տեսքով՝ ԿԳՄՍ նախարարության կողմից, իսկ գումարի 12.2%-ը տրամադրվում է մրցութային կարգով ընտրված կազմակերպություններին:
ԿԳՄՍ նախարարությունից ստացված տվյալների հիման վրա պարզ դարձավ, որ ՏՄԱԿ-ների և ՀՄԿ-ի ֆինանսավորման չափը հաշվարկվել և հատկացվել է 2016 թվականի սեպտեմբերի 22-ի ՀՀ կառավարության “Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին” թիվ 968-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան: ՏՄԱԿ-ների և ՀՄԿ-ի ֆինանսավորման աշխատավարձի ֆոնդը կազմել է 3, 7 մլրդ դրամ:



Հանդիսանալով ՀՀ ներառական կրթության գործընթացի կազմակերպման, համակարգման և մեթոդաբանության մշակման կարևորագույն սուբյեկտներից մեկը՝ ՀՄԿ-ն, ՏՄԱԿ-ների հետ միասին, պետբյուջեից իրենց հատկացված գումարի սահմաններում իրականացրել են ուսումնական հաստատությունների մասնագետների վերապատրաստումներ, տրամադրել խորհրդատվություններ, իրականացրել մշտադիտարկումներ:

2023-2024 ուսումնական տարուց սկսած ներառական կրթության համակարգում առավել նշանակալի դեր է վերապահված ՏՄԱԿ-ներին և ՀՄԿ-ներին: Դրանք դարձել են ներառականության իրականացման առանցքային դերակատարներ՝ ապահովելով ԿԱՊԿՈՒ երեխաների աջակցությունն ու ուղեկցումը կրթական ճանապարհին:

Այնուամենայնիվ, ինչպես արձանագրել են հարցազրույցներին մասնակցած դպրոցների տնօրենները, ՏՄԱԿ-ների կողմից տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ժամանակահատվածը հաճախ բավական չէ՝ պատասխանելու երեխաների իրական և բազմաշերտ կարիքներին: Սա ստեղծում է իրավիճակ, որտեղ ուսուցիչներն ու դպրոցի անձնակազմը մնում են մասնագիտական աջակցությունից զուրկ՝ հատկապես բարդ վարքային կամ զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների հետ աշխատելիս:

Շատ հաճախ ծնողները լիարժեքորեն տեղեկացված չեն, թե իրենց խնդիրներով ում պետք է դիմեն, կրթական համակարգում որ կառույցն ինչ դեր և պատասխանատվություն է ստանձնում: Արդյունքում, բազմաթիվ հարցեր մնում են չպարզաբանված ու «օդում կախված»:

Այս տեղեկատվական բացը հաճախ հանգեցնում է նրան, որ հաշմանդամություն ունեցող երեխան դպրոց է հաճախում միայն այն օրերին, երբ նախատեսված է ՏՄԱԿ-ի մասնագետի այցելությունը: Այս իրավիճակը ոչ միայն խաթարում է երեխայի կրթական շարունակականությունը, այլ նաև վկայում է համակարգային հաղորդակցության և ծառայությունների համադրման բացի մասին:

> Շաբաթը մեկ օր 20 րոպեով են աշխատում: Քիչ է հատկացված ժամանակը: Ծնողը մեկ րոպեի հետ էլ հույս է կապում: Իրանք/մասնագետները/ անընդհատ գնում են վերապատրաստման և գնում են երեխաների հաշվին: Շաբաթական 1 օր է եղել, որ պետք է աշխատեն, եղել են վերապատրաստման: Ես կողմ եմ իրենց վերապատրաստումներին, բայց ոչ իմ երեխայի հաշվին…
>
> «Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ծնող»

Ինչպես երևում է համընդհանուր ներառական կրթության գործընթացին ուղղված պետական քաղաքականությունից ՏՄԱԿ-ների աշխատանքը կարևոր հենասյուն է ներառական կրթության արդյունավետ կազմակերպման գործում: Նրանք դարձել են միակ մասնագիտական օղակը, որից դպրոցներն ու ծնողները պետք է ստանան նպատակային աջակցություն: Սակայն ներկայում դրանց գործունեությունը բախվում է ժամանակային սահմանափակումների, մասնագետների պակասի և տարածքային անհասանելիության խնդիրների: Նկատելի է, որ համակարգում առկա է ֆինանսական ռեսուրսների ոչ համաչափ բաշխում, որն ի հայտ է գալիս հատկապես՝ ՏՄԱԿ-ների և հանրակրթական դպրոցների համեմատության մեջ: Դպրոցներն, որոնք հանդիսանում են երեխաների ուսուցման և ներառման իրական տարածք, ունեն գերծանրաբեռնված ուսուցիչներ, մեծ թվով ԱՈՒՊ ունեցող երեխաներ, չհարմարեցված միջավայր, հատուկ մասնագետների և ուսումնական նյութերի պակաս: Միևնույն ժամանակ, նրանց ֆինանսական հնարավորությունները խիստ սահմանափակ են, ինչը խոչընդոտում է ներառական կրթության արդյունավետ իրականացումը: ՏՄԱԿ-ները, որոնք ի սկզբանե նախատեսված են որպես աջակցող կառույցներ՝ (գործողություն՝ երեխայի կարիքների ախտորոշում, ԱՈՒՊ մշակում, մեթոդական աջակցություն), հաճախ ունեն ավելի լայն բյուջե, մեծ վարչական ծախսեր (վարձ, սպասարկում, տեխնիկա), աշխատակիցների համեմատաբար քիչ ծանրաբեռնվածություն, և փակ գործառույթներ, որոնք սահմափակվում են գնահատմամբ, ոչ՝ երկարաժամկետ ուղեկցմամբ: Այս իրավիճակը հանգեցնում է նրան, որ՝ ռեսուրսները գնում են աջակցող շերտին, այլ ոչ առաջնային՝ կրթական գործընթացին, դպրոցները մնում են առանց բավարար միջոցների՝ ապահովելու իրական ներառական կրթություն, համակարգում չի նկատվում հաշվետվողականություն կամ արդյունավետության չափում՝ ռեսուրսների համատեքստում:

> Դպրոցն ունի հարմարավետության, թեքահարթակների խնդիր: Պարտադիր երկու ամիսը մեկ պետք է լինի ժողով, որտեղ պետք ա լինեն ՏՄԱԿ-ի բոլոր մասնագետները , օգնականներ, փոխտնօրենները, հիմնականում չեն արել: Շատ է լինում, որ դպրոցի մանկավարժները շատ տգեղ անզգույշ խոսքեր են ասում: Ես ասել եմ, որ պետք է լինի ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքների պաշտպան, իրավաբան, որ հետևի այս ամենին, հետևի, որ մասնագետներն իրենց աշխատանքը ճիշտ անեն, հետևեն բառամթերքին:
>
> «Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ծնող»

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներն ունեն մի շարք իրավական երաշխիքներ՝ ամրագրված ինչպես ազգային օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով (այդ թվում՝ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով): Սակայն, գործնականում հաճախ արձանագրվում են իրավախախտումներ կամ բացթողումներ, որոնք կապված են ինչպես դպրոցի ներսում խտրականության, այնպես էլ մատչելիության սահմանափակումների, խոչընդոտող միջավայրի կամ արդյունավետ իրավական մեխանիզմների բացակայության հետ:

Այս համատեքստում ծնողները գտնում են, որ անհրաժեշտ է դպրոցներում կամ կրթության տարածքային կառույցներում ունենալ իրավաբանի առանձին հաստիք, որի գործառույթները կլինեն՝ ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքների պաշտպանություն և իրավական խորհրդատվություն ծնողներին, ուսուցիչներին և դպրոցների ղեկավարությանը: Կիրականացնեն իրավական միջամտություն խտրականության դեպքերում կամ իրավունքների խախտման այլ իրավիճակներում: Ի վերջո կկազմակերպեն ներկայիս օրենսդրական դաշտի մշտադիտարկում և մանկավարժահոգեբանական աջակցություն ցուցաբերող թիմերի

իրավական աջակցություն՝ փաստաթղթային ձևակերպումներում և ընթացակարգերում: Ծնողները գտնում են, որ իրավաբանի ներգրավումը կբարձրացնի ոչ միայն հաշվետվողականության մակարդակը, այլև կհանգեցնի ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքների համակարգված պաշտպանությանը՝ ապահովելով ներառական կրթության իրական հավասար հնարավորություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ներառական կրթության քաղաքականությունը կարևոր քայլ է դեպի սոցիալական ներառում և հավասար հնարավորությունների ապահովում բոլոր երեխաների համար: Չնայած վերջին երկու տասնամյակում արձանագրված է զգալի առաջընթաց, համակարգի շարունակական զարգացումը պահանջում է բավարար ֆինանսավորում, թափանցիկ կառավարում, ինչպես նաև ուսուցիչների պատրաստվածության և ենթակառուցվածքների մշտական կատարելագործում:
Այսօր Հայաստանի Հանրապետությունում առկա է ներառական կրթության իրավական կայուն հիմք, որը նպաստում է կրթական հավասար հնարավորությունների ստեղծմանը և հասարակության մեջ համերաշխության ու հարգանքի արժեքների ձևավորմանը: Սակայն քաղաքականությունը պետք է վերածվի գործնականում արդյունավետ և կիրառելի լուծումների՝ հիմնված երեխայի անհատական կարիքների վրա:
Ֆինանսավորման կառուցվածքը, մասնավորապես՝ մանկավարժահոգեբանական աջակցությանը տրամադրվող գերակշիռ ռեսուրսները, վկայում է պետության գիտակցված հանձնառության մասին: Միևնույն ժամանակ, արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է զարգացնել վերահսկման, գնահատման և մեթոդական աջակցության հստակ մեխանիզմներ՝ ապահովելով համակարգի գործնական արդյունքայնություն:
Ներառական կրթության իրականացումը մեծապես կախված է այն աջակցությունից, որ երեխան ստանում է դասարանում: Ուսուցիչները հաճախ կանգնում են ծանրաբեռնվածության և ռեսուրսների սահմանափակության առաջ, ինչը դժվարացնում է կրթության անհատականացված մոտեցման ապահովումը: Շատ երեխաներ ունեն ֆիզիկական, զգայական, վարքային կամ ուսման դժվարություններ և անհատական աջակցության կարիք՝ առաջադրանքները հասկանալու, շարժվելու, հաղորդակցվելու կամ կենտրոնանալու համար:
Այս համատեքստում կենսական անհրաժեշտություն է անձնական օգնականների ինստիտուտի զարգացումը դպրոցներում: Դա ոչ միայն կրթական իրավունքի երաշխավորում է, այլ նաև խթան՝ ներառական միջավայրի կայացման, ուսուցիչների մասնագիտական բեռնաթափման և երեխայի ինքնուրույնության ու սոցիալականացման համար: Հակառակ դեպքում, այդ դերը հաճախ անցնում է ծնողներին, ինչը խոչընդոտում է թե՛ նրանց աշխատանքային հնարավորություններին, և թե՛ երեխայի զարգացող ինքնուրույնությանը:
Ծնողների արձագանքները ցույց են տալիս, որ համակարգը դեռևս լիարժեք ճկուն չէ և ոչ միշտ է համընկնում երեխայի իրական կարիքների հետ: Հետևաբար, անհրաժեշտ է առաջ տանել ավելի կիրառական և մարդակենտրոն լուծումներ՝ լիարժեք լսելով և ներառելով ծնողի և երեխայի ձայնը քաղաքականությունների մշակման և ծառայությունների տրամադրման գործընթացներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում ներառական կրթության համակարգի ամրապնդման համար առաջարկվում են հետևյալ քայլերը՝

1. Բարձրացնել ֆինանսավորման թափանցիկությունը. ԿԳՄՄՆ-ն պետք է հրապարակի ներառական կրթության համար հատկացված բյուջեի վերաբերյալ մանրամասն տարեկան զեկույցներ՝ նշելով ծախսերի բաշխումը (ենթակառուցվածքներ, վերապատրաստում, ռեսուրսներ):
2. Իրականացնել ՏՄԱԿ-ների բյուջեի վերանայում և վերաբաշխում՝ ըստ հետևյալ սկզբունքի՝ ՏՄԱԿ-ների վարչական ծախսերը կրճատել, ապահովելով հիմնական ֆունկցիայի իրականացումը: Ազատված միջոցներն ուղղել՝

- ✓ Դպրոցներում անձնական օգնականների հաստիքի ներդրմանը,
- ✓ ուսուցիչների հավելավճարներին ներառական կրթության ապահովման համար:

3. Ստեղծել մոնիթորինգային հստակ մեխանիզմներ՝ ներառական կրթության որակի, հասանելիության ու արդյունավետության գնահատման համար:

   3.1 Ներդնել գնահատման գործընթաց: Մասնավորապես, ծնողներին հնարավորություն ընձեռել յուրաքանչյուր ուսումնական տարեվերջին իրականացնել երեխայի հետ աշխատող մասնագետի գնահատում: Թերթիկը պետք է լինի անանուն: Տվյալ գործառույթը կարող է իրականացնել հնարակրթական դպրոցի և/կամ մանկապարտեզի վարչական աշխատակազմը:

   3.2 Հիմնել բողոքարկման և արձագանքման թափանցիկ հարթակներ՝ երեխաների, ծնողների , խնամակալների և ուսուցիչների համար:

4. Ներդնել ոլորտային իրավունքի պաշտպանի հաստիք:
5. Կրթական հաստատություններում ներդնել անձնական օգնականի հաստիք: Անձնական օգնականը կաջակցի երեխային՝ դասերի ընթացքում՝ հասկանալու, աշխատելու, գրելու, ընթերցելու հարցերում: Դասից դուրս՝ տարածքում տեղաշարժվելու, կազմակերպվելու, հոգատար միջավայր ունենալու, հաճախ նաև՝ շփման, հուզական հարմարավետության հարցերում: Այն չի փոխարինում ուսուցչին, այլ օգնում է ապահովել երեխայի անհատական ուսումնական պլանի (ԱՈՒՊ) իրագործումը:
6. ԿԱՊԿՈՒ/ԿԶԱՊԿ երեխաների հետ աշխատանքներում ընդգրկել ֆիզիոթերապիստ, ով կաշխատի ֆիզկուլտուրայի դասաժամերի ընթացքում:
7. Դպրոցներում և մանկապարտեզներում վերականագնել բազմամասնագիտական թիմի հաստիքները՝ ներառյալ լոգոպեդ, սոցիալական մանկավարժ:
8. Դպրոցներում և մանկապարտեզներում ստեղծել ռեսուրս-սենյակներ, որոնք հագեցած կլինեն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և կունենան համապատասխան կահավորանք: Բացի մասնագիտական թիմից ռեսուրս-սենյակներում կցված լինեն սոցիալական օգնականներ, ովքեր անհրաժեշտության դեպքում կցուցաբերեն անհատական մոտեցում՝ կարիքների հիման վրա:

9. Ծնողական համայնքի շրջանում իրականացնել իրազեկում՝ իրավական, կրթական և առողջապահական ոլորտների վերաբերյալ:
10. Ռեսուրս-սենյակներում տեղադրել տեսախցիկներ կամ ունենա այնպիսի ապակիով պատուհան, որ երեխան ներսից ծնողին չտեսնի, իսկ ծնողը՝ տեսնի:
11. Անցում կատարել վաուչերային համակարգի, երբ ծնողը ինքը կարող է ընտրել մասնագետ իր երեխայի հետ աշխատելու համար՝ հիմք ընդունելով մասնագետի աշխատանքի արդյունավետությունը և հեղինակությունը:
12. Համայնքային բյուջեները անցում կատարեն ծրագրային բյուջետավորման՝ ինչպես պետական բյուջեն:

Հավելվածներ

Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների հետ ֆոկուս խմբի հարցաշար

Ներկայացնել հետազոտության նպատակը և թե ինչպես են օգտագործվելու հարցազրույցի պատասխանները:

Հարցաթերթը նպատակ ունի հավաքել ծնողների կարծիքները և առաջարկությունները՝ ներառական կրթության վերաբերյալ:

Սույն հետազոտությունը անանուն է, վերլուծությունը ներկայացվելու է ընդհանրական:

Եթե դեմ չեք՝ ձայնագրեմ, ձայնագրությունը միայն սղագրելու նպատակով է արվում և հասանելի է լինելու բացառապես հետազոտող թիմին, իսկ վերլուծությունից հետո՝ կոչնչացվի:

Ձեր թույլտվությամբ միացնում եմ ձայնագրությունը:

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ընդհանուր տվյալները.

1.1. Ֆոկուս խմբի քննարկմանը մասնակցող ծնողների երեխաների տարիքային խումբ/հարց հազրուցավարին/:

- 6-9
- 10-15

2. Երեխայի կարիքները և կրթական ծառայությունները.

2.1. Ինչպիսի՞ պայմանների և ի՞նչ ծառայությունների կարիք ունի Ձեր երեխան դպրոցում:

- Անձնական օգնական (թարգմանիչ, օգնական ուսուցիչ)
- Աջակացող մասնագիտական թիմ/հոգեբան, լոգոպեդ և այլն/
- Պետական հատուկ ծրագրեր
- Տեխնոլոգիական աջակցության միջոցներ
- Անհատականացված դասեր /ԱՈՒՊ, տնային ուսուցում, հավելյալ/մասնավոր/ արտադպրոցական պարապմունքներ, թերապիաներ/
- Բարելավված միջավայր (սենյակներ, համալիր միջավայր)
- Այլ (նշեք) _____

_____

2.3. Ի՞նչ խնդիրների եք հանդիպում/բախվում, երբ փորձում եք օգտվել այս ծառայություններից՝ կապված պետական միջոցների և ծրագրերի հետ:----------

2.4. Քանի՞ տարի է, ինչ Ձեր երեխան ընդգրկված է ներառական կրթություն համակարգում:

3. Մասնագիտական աջակցություն

3.1. Ինչ եք կարծում, արդյոք ՀՀ դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաներին համակարգված մասնագիտական աջակցություն ցուցաբերող մասնագետների (հոգեբաններ, լոգոպեդներ, սոցիալական մանկավարժներ և այլ) թիմի աշխատանքը բավարար են՝ Ձեր երեխայի կարիքները հոգալու համար:

- Այո/մանրամասնել/
- Ոչ/մանրամասնել/

3.2. Արդյո՞ք ունեցել եք մասնագետների հետ համագործակցության դժվարություններ՝ ֆինանսական սահմանափակումներով կամ ծրագրերի պակասով պայմանավորված: ----------

3.3. Արդյո՞ք պետական բյուջեից տրամադրվող միջոցները բավարար են՝ երեխաների հատուկ կարիքներին համարժեք աջակցություն ցուցաբերելու համար:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

4. Ֆինանսավորումը և ուսումնական ծառայությունների հնարավորությունները.

4.1. Ձեզ հայտնի՞ է, թե դպրոցները ինչպես են ֆինանսավորում երեխաների համար՝ հատուկ կրթական ծրագրերն իրականացնելիս:

- Այո (եթե այո՝ մանրամասնել----------)
- Ոչ

4.2. Որքանո՞վ լավ է իրականացվում այդ ֆինանսավորումը ըստ Ձեզ:

- Շատ լավ
- Լավ
- Բավարար
- Անբավար

4.4. Դուք կարծում եք, որ ՀՀ-ում ներառական կրթության ֆինանսավորումը պետք է ավելանա՞:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

4.5. Ըստ Ձեզ, ո՞րն է/որո՞նք են ՀՀ-ում ներառական կրթության ֆինանսավորման անբավարար կամ թերի լինելու պատճառը/պատճառները:

_____

- Սակավ ֆինանսավորումը/պետական բյուջեի անբավարար միջոցները
- Աջակցման միջոցների/անհատականացված ուսումնական ծրագրեր՝ ԱՈՒՊ, դիդակտիկ նյութեր, մասնագիտական աջակցություն, վերապատրաստված ուսուցիչներ և անձնակազմ, հարմարեցված ֆիզիկական միջավայր, հատուկ տեխնոլոգիաներ՝ համակարգիչներ և պլանշետներ, աուդիոգրքեր, շոշափողական, բրայլյան և տեսողական պարագաներ և այլն/ ոչ ամբողջական հասանելիությունը
- Աջակցման ծրագրերի անհամապատասխանությունը երեխաների կարիքներին:
- Այլ (նշեք) _____

4.6. Համաձա՞յն եք, որ պետական ֆինանսավորումը պետք է ուղղվի նաև դպրոցների ենթակառուցվածքների բարելավմանը:

- Այո
- Ոչ

4.7 Տեղյա՞կ եք ինչ ասել է "աջակցող միջոցներ" կամ "համընդհանուր դիզայն":

4.7.1 Դպրոցները որքանո՞վ պետք է հետևեն "համընդհանուր դիզայն"-ի սկզբունքներին:

4.7.2 Իսկ որպես ծնող, որքանո՞վ եք Դուք մասնակցություն ունենում դպրոցի մատչելիության ապահովման գործընթացներում:

4.8. Ի՞նչ եք կարծում, եթե ՀՀ կառավարության կողմից բյուջետային միջոցները ավելանան, ապա դա կբարելավի ներառական կրթության որակը և հասանելիությունը Հայաստանում:

- Այո
- Ոչ
- Մասամբ

4.9. Արդյո՞ք երբևէ մասնակցել եք/ներկա եք եղել դպրոցի բյուջեի քննարկմանը: Եթե այո, ապա մանրամասնեք:

4.10. Եթե երբևէ չեք մասնակցել կամ մասնակցել եք, սակայն նորից նման հնարավորություն լիներ, կցանկանայիք մասնակցել:

5. Առաջարկներ.

5.1. Որո՞նք են այն ծառայությունները կամ ծրագրերը, որոնք հասանելի չեն Ձեր երեխային դպրոցում, սակայն կցանկանայիք, որպեսզի նա օգտվեր դրանցից: ----------

6. Ընդհանուր կարծիքներ.

6.1. Որպես ծնող, ինչպե՞ս եք գնահատում ՀՀ-ում ներառական կրթության ընդհանուր վիճակը:

- Շատ լավ
- Լավ
- Բավարար

_____

- Անբավարար

6.2. Իսկ ինչպե՞ս եք գնահատում ներառական կրթության ոլորտում կառավարության ջանքերը՝ հաշվի առնելով Ձեր երեխայի կարիքները:----------

6.3. Ի՞նչ այլ քայլեր պետք է ձեռնարկվեն, որոնք կարող են նպաստել՝ բարձրացնելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասնակցությունը կրթական գործընթացին: ----------

6.4. Ինչպիսի՞ ներդրումներ կամ բարելավումներ եք ուզում տեսնել պետբյուջեից տրամադրված ֆինանսավորման մեջ՝ հատուկ կարիքներով երեխաների կրթվելու գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:----------

Շնորհակալություն

Սույն ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Լուսաստղ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Համընդհանուր ներառում. Պետական ներդրումների արդյունավետություն և հաշվետվողականություն» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Լուսաստղ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՏՄԱԿ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԱՇԱՐ

Ներկայացնել հետազոտության նպատակը և թե ինչպես են օգտագործվելու հարցազրույցի պատասխանները:

Ձեր անունը հետազոտության մեջ կնշվի միայն ձեր թույլտվությամբ *և համաձայնությամբ, և եթե դեմ եք, որ անունը նշվի, կօգտագործվի «դպրոցի տնօրեն» արտահայտությունը:*

Եթե դեմ չեք՝ ձայնագրեմ, ձայնագրությունը *միայն սղագրելու նպատակով է արվում և հասանելի է լինելու բացառապես հետազոտող թիմին, իսկ վերլուծությունից հետո՝ կոչնչացվի:*

Ձեր թույլտվությամբ միացնում եմ ձայնագրությունը:

Նշեք, խնդրեմ, դպրոցի տեսակը՝

- հիմնական
- միջնակարգ

1. Որո՞նք են Ձեր դպրոցի առաջնահերթությունները:
2. Ի՞նչ սկզբունքով է գրվում դպրոցի ռազմավարական պլանը:
3. Ինչպե՞ս է դպրոցը իրականացնում տարբեր կարողություններով աշակերտների ուսուցումը:
   3.1 Թվով քանի՞ ներառված երեխա կա դպրոցում այս պահի դրությամբ:
   3.2 Նրանցից քանի՞սն են տարրական օղակում, քանի՞սը՝ միջին:

3.3 Ի՞նչ տեսակի հատուկ կարիքներ ունեն այդ երեխաները՝ ֆիզիկական, մտավոր հուզական, ուսումնական…

3.4 Ի՞նչ լրացուցիչ աջակցություն է տրամադրվում դպրոցում այդ երեխաներին ՝ հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ…

4. Կա՞ն արդյոք այլ պետական կառույցներ, որոնք դպրոցում նման ծառայություններ են մատուցում ԿԱՊԿՈՒ երեխաներին:
5. Ինչպիսի՞ միջոցներ են հատկացվում Ձեր դպրոցին ՀՀ պետբյուջեից ներառական կրթության նպատակով:
   5.1 Որքա՞ն է գումարի տարեկան չափը:
   5.2 Արդյո՞ք կա հստակ որոշված բաշխման մեխանիզմ:
6. Ինչպե՞ս են բաշխվում ամբողջ ուսումնական տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցները (արդյո՞ք Դուք եք պետությանը թելադրում ձեր կրիքները, թե պետբյուջեն է թելադրում ծախսերը):
   6.1 Որքանո՞վ է նպատակահարմար, երբ Դուք/դպրոցը/ եք պետությանը թելադրում ձեր կարիքները(թերություններ և առավելություններ):
   6.2 Որքանո՞վ է նպատակահարմար, երբ պետբյուջեն է թելադրում ձեր/դպրոցի/ ծախսերը(թերություններ և առավելություններ)
7. Արդյո՞ք հատկացվող գումարը բավարար է ներառված բոլոր երեխաների կարիքները հոգալու համար:
8. Ի՞նչ հիմնական ծրագրերի կամ կարիքների համար են ծախսվում հատկացված միջոցները. նշեք, խնդրեմ, թե որոշակի գումարի չափն ի՞նչ ծառայության համար է նախատեսված՝

- Մասնագետներ/դասավանդող, լոգոպեդ, հոգեբան, հատուկ մանկավարժ…/
- Տեխնիկական միջոցների ձեռքբերում/համակարգիչներ և պլանշետներ, աուդիոգրքեր, լսողական սարքեր, շոշափողական, բրայլյան և տեսողական պարագաներ և այլն …/
- Ֆիզիկական միջավայրի հարմարեցվածություն/թեքահարթակ, հարմարեցված սանհանգույց, վերելակ…/
- Այլ

8.1. Արդյո՞ք Դուք, որպես դպրոցի տնօրեն, կիրառում եք “ինտերակտիվ բյուջե” գործիքը՝դպրոցի ֆինանսական կառավարումը հեշտացնելու համար:

9. Արդյո՞ք դպրոցում առկա է բավարար թվով կադրային անձնակազմ՝ հատուկ կարիքներով երեխաներին անհրաժեշտ ծառայությունների տրամադրման համար:
10. Արդյո՞ք բավարար են կրթական ոլորտում հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող առկա մասնագետների պատրաստվածության աստիճանը, մասնագիտական որակները:
11. Կազմակերպվու՞մ են վերապատրաստումներ դպրոցի մանկավարժների համար, և արդյո՞ք դրանց մի մասը ուղղված է ներառական կրթությանը:
12. Ընհանուր առմամբ, տեղյակ եք, թե որքան գումար է պետբյուջեով նախատեսված 2024-2025թթ. ուս.տարվա ներառական կրթության համար:
13. Որքանով որ Դուք եք տեղյակ, կա՞ առանձնացված բյուջետային տող ներառական կրթության համար:
14. Ինչպե՞ս է բաշխվում ֆիանասավորումը կրթական հաստատությունների միջև. արդյո՞ք արդար է գումարի բախումը և ի՞նչ չափորոշիչներով է իրականացվում:
15. Արդյո՞ք իրականացվում է մշտադիտարկում՝ պետբյուջեից ներառական կրթությանն ուղղված միջոցների հետ կապված:
16. Եթե այո, ապա ի՞նչ մեխանիզմներով է դա իրականացվում և ո՞վ/ովքե՞ր է/են այն իրականացնողները:

17. Արդյո՞ք դպրոցի ուսուցիչները և ծնողները ներգրավված են դպրոցի բյուջեի պլանավորման և կառավարման գործընթացում:
    17.1 Եթե այո, ինչպե՞ս է կազմակերպվում նրանց մասնակցությունը:
    17.2 Արդյո՞ք ծնողխորհրդում ընդգրկված է հաշմանդամություն ունեցող երեխայի ծնող:
18. Ինչպե՞ս է ապահովվում բյուջեի թափանցիկությունը դպրոցում:
    18.1 Արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները հասանելի են շահագրգիռ կողմերին (ԿԳՄՍ, ծնողխորհուրդ, ուսուցիչներ):
    18.2 Ինչպե՞ս են ներկայացվում այդ հաշվետվությունները (օրինակ՝ ժողովներում, փաստաթղթերով և այլն):
19. Առհասարակ, ինչպե՞ս կարող են հատուկ կարիքներով երեխաների ծնողները տեղեկանալ իրենց երեխաներին տրամադրվող ծառայությունների և ֆինանսավորման մասին:
20. Ի՞նչ մարտահրավերներ կամ խնդիրներ եք տեսնում ներառական կրթության ֆինանսավորման առումով:
21. Ի՞նչ մարտահրավերներ կամ խնդիրներ եք տեսնում այդ ֆինանսների օգտագործման առումով:
22. Ի՞նչ առաջարկներ կամ լուծումներ ունեք ներառական կրթությանն ուղղված բյուջետային միջոցների արդյունավետության վերաբերյալ:
23. Ի՞նչ առաջարկներ կամ լուծումներ ունեք ներառական կրթությանն ուղղված բյուջետային միջոցների թափանցիկության վերաբերյալ:
    23.1 Կա՞ ինչ որ խնդիր, որի մասին Դուք կցանկանայիք բարձրաձայնել, բայց հարցազրույցի ընթացքում անդրադարձ չկատարավեց:

Սույն ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Լուսաստղ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Համընդհանուր ներառում. Պետական ներդրումների արդյունավետություն և հաշվետվողականություն» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվությունն է կրում «Լուսաստղ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: